«Պատիվ ունեմ»

Ծրագրի գաղափարախոսությունն է՝ բուհական տարկետումը կապել ապագա սպայական ծառայության հետ: Պետական հավատարմագրում ունեցող (պետական կամ մասնավոր) բուհ ընդունված, պարտադիր ժամկետային ծառայության ենթակա յուրաքանչյուր երիտասարդ իրավունք ունի դիմելու ծրագրում ընդգրկվելու համար: Մի շարք պայմանների համապատասխանելու դեպքում (առողջական վիճակ, հրամանատարական ջիղըորոշելուն միտված հոգեբանական թեստավորում, ուսման ընթացքում գնահատականի նվազագույն շեմի պահպանում) նա կարող է ընդգրկվել նշված ծրագրում՝ հավակնելով սպայի կոչման: Քաղաքացիական բուհերի ուսանողները ՀՀ ՊՆ Վազգեն Սարգսյանի անվան ռազմական համալսարանում յուրաքանչյուր շաբաթ օր զինվորական պատրաստության դասընթացները հաջող անցնելու և քաղաքացիական բուհի դիպլոմ ստանալու դեպքում բակալավրի աստիճան ստանալուն զուգընթաց կստանան լեյտենանտի սպայական կոչում և 3 տարի ժամկետով ծառայություն կանցնեն զինված ուժերի մարտական հերթապահություն իրականացնող ստորաբաժանումներից մեկում: Ծառայությունը կազմակերպվում է քաղաքացիական մասնագիտությունը հաշվի առնելով, բայց բոլոր դեպքերում՝ 1-ին կարգի զորամասերում (առաջնագիծ):Ծրագրի կարևոր արդյունքներից է լուրջ սպայական պահեստազորի ձևավորումը և տակտիկական օղակի զինվորականներով անձնակազմը համալրելը /դասակի հրամանատար, վաշտի հրամանատար/:

Մեծաքանակ շարքային պահեստազոր ունեցող բանակին անհրաժեշտ են հմուտ և առաջնագծում ծառայություն անցած պահեստազորի սպաներ:

Հիմնական առավելությունները՝

- Ծառայությունը իրականացնել որպես սպա
- Ուսման վարձի փոխհատուցում, ներառյալ մագիստրատուրան /միջին գնահատականի պահպանման պարագայում/
- Զին.ծառայողին հասանելի սոցիալական երաշխիքներ /ծառայողական բնակարան, բուժ. օգնություն և միջինից բարձր աշխատավարձ/